

Ա. ՅՈՐԻ

Կ
ԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՎՐԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԿՈՒՍՏՐՈՍՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ • 1934

396

Շ 84

396

284

4

00 APR 2010

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացիք

ԿԱՆԱՆՑ ԱԶԻԱՏԱՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄԵԶ

1606
29047
2879

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՒՍՂՐՈՏԱՐԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ
ԺԱՄԱՆԱԿ

Կանանց աշխատանքի գործադրումը կապիտալիստական հասարակարգում բխում է հենց կապիտալիստական շահագործման եյությունից: Կինը, ինչպես և փոքրահասակները կապիտալիստական պայմաններում ամենաեղանակալից բանվորական ուժն է:

Մեծ հավելյալ արժեք ստնալու համար, կապիտալիստը գործադրում է կանանց ու փոքրահասակների աշխատանքը:

Կապիտալիստը հնարավորութուն ստացավ լայն չափով գործադրելու կանանց ու յերեխաների աշխատանքը այն ժամանակվանից, յերբ սկսվեց մեքենաների կիրառումը արտադրության մեջ: «Վորչափով վոր մեքենաներն ավելորդ են դարձնում մկանային ույժը, նրանք դառնում են այնպիսի բանվորներ կիրառելու միջոց, վորոնք մկանային ույժից զուրկ են, կամ թե մարմնավես լիովին զարգացած չեն, բայց ոժտված են անդամների ավելի մեծ ճկունությամբ: Այս պատճառով էլ կանանց ու մանուկների աշխատանքը մեքենաների կապիտալիստական կիրառման առաջին խուճն էր»: (Մարքս—Կապիտալ, հ. I, յեր. 360, հայեր. թարգ.):

Պատասխանատու խմբագիր—ԱՄԱՏՈՒՆԻ
Տեխնիկ. խմբագիր—ՎԱՍԻԼՉԵՆԿՈ

Ստացված է 28/II—34
Տպագրելու 5/III—34
Գլավխիտ № 49
Տիրաժ—2000

Կապիտալիստական Ռուսաստանում կանանց աշխատանքը սկսվեց տարածվել մեծ չափով XX դարու սկզբին, և մանավանդ խմբերիալիստական պատերազմի տարիներում, յերբ տղամարդկանց մասսայականորեն մորիլիզացիա էլին անում ճակատի համար: Տղամարդկանց փոխարինումը կանանցով,—նշանակում է միևնույն ժամանակ կանանց շահագործման ուժեղացում:

Կանանց աշխատանքի անշափ յերկար բանվորական որը, չնչին աշխատավարձը, ձեռնարկություններին մեծագույն մասի հակառուղի ապահական դրությունը, աշխատանքին, մանավանդ կանանց աշխատանքին պաշտպանության բացակայումը—քայքայում ու շլատում էլին կանանց արտադրական ուժերը: Յեթե սրա վրա ավելացնենք կանանց աշխատանքի կիրառումը վոչ վորակյալ, կամ քիչ վորակյալ աշխատանքներում, մի բան, վոր ցարական Ռուսաստանում կանանց աշխատանքի դործադրման առանձնահատուկ գիծ է յեղել, այն ժամանակ պարզ կլինի կանանց ծանր վիճակը՝ մինչև կյանքի վերջը կապված մնալ սև աշխատանքին, նրա որդանիդմի համար ծանր ու վտանգավոր պայմաններում:

Վ. Ի. Լենինը շատ ցայտուն կերպով է վորակել կանանց դրությունը կապիտալիստական հասարակակարգում, ուր կապիտալիստական շահագործման պայմաններում—կինը դատապարտված է «տնային ստըրկության», վորը նրան ճնշում է, խեղդում, բթացնում, մանր տնային տնտեսությունը ստորացնում նրան, կապելով խոհանոցին և մանկանոցին, քայքայելով նրա ուժերը մինչի վայրենության հասնող անար-

դյունավետ, մանր, շղայնացնող, բթացնող ու տանջող աշխատանքի մեջ»: (Մեծ նախաձեռնություն—Լենին, հ. XXIV, յեր. 343):

Բանվորուհու ու գեղջիկուհու նախնեղափոխության ծանր վիճակի մասին պատմում են Լենինգրադի բանվորուհիները ընկ. Ստալինին գրած նամակում.

«Ամենամեծ տանջանքները—այդ շահագործողներին կողմից յեռակի ճնշված բանվորուհու և գեղջիկուհու տանջանքներն են յեղել: Յեվ արտադրության մեջ, և ընտանիքում և թե հասարակության մեջ—նա իրեն միշտ զգացել է ստրկուհի: Մի կտոր չոր հացի համար մենք ոչխատում էլինք որական 12 ժամ: Փակում էլինք յերեխաներին խոնավ նեղուղներում, վոր կոչվում էին բանվորների «բնակարաններ»:

ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՅ ՀԵՏՈ

1917 թ. Հոկտեմբերի պրոլետարական հեղափոխության հաղթանակը վճռողական սոցիալական բեկում առաջ բերեց կանանց աշխատանքի բնագավառում, ինչպես նաև հասարակական կյանքի մյուս բոլոր ասպարեզներում: Պրոլետարական հեղափոխության հաղթանակը նշանակում է կապիտալիստական շահագործման խորտակումը նաև կանանց աշխատանքի ասպարեզում, աշխատանքի վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով:

Սորհրդային իշխանության հենց սկզբից կանանց աշխատանքի ասպարեզում մտցնվում են մի շարք արմատական բարելավումներ. ինչպես որինակ—տղամարդկանց ու կանանց միաշափ աշխատավարձ, հավա-

սար աշխատանքի համար, կանանց աշխատանքի պաշտպանութեան հատուկ միջոցներ, կանանց աշխատանքի արգելումը մի շարք վնասակար արտադրութեան համար, արձակուրդ հղիութեան պատճառով և այլն:

Մորհրդային Միութեան մեջ կինը իրավահավասար անդամ է սոցիալիստական մեծ ընտանիքի, ու տղամարդու հետ միասին կառուցում է իր նոր սոցիալիստական հայրենիքը:

Սակայն, յիժե աշխատավոր կինը Հոկտեմբերյան Հեղափոխութեան հենց առաջին որից միանգամայն ազատագրվեց քաղաքականապես ու ստացավ լրիվ իրավունքներ, տնտեսապես նա դեռ մեծ չափով կախված է ամուսնուց ու նրա անտեսութենից: Պրոլետարիատի ձեռքով իշխանութեանը զբաղեցրուց հետո, Վ. Ի. Լենինը, բնութագրելով կանանց դրութեանը, գրում է. «աշխարհումս վոչ մի դեմոկրատական կուսակցութեան, բուրժուական ամենաառաջավոր հանրապետութեաններից և վոչ մեկում տասնյակ տարիների ընթացքում չի արվել այն ամենի հարյուրյերորդ մասը, ինչ մենք արեցինք մեր իշխանութեան առաջին տարում»:

Մենք, բառիս իսկական իմաստով, քարը քարի վրա չթողեցինք կանանց անհավասարութեան ստոր որենքներից, վորոնց մնացորդները բաղմամբիվ են բոլոր քաղաքակիրթ յերկրներում, և համոթ բուրժուազիայի և կապիտալիզմի, այն է՝ ապահարդանը սահմանափակող զգվելի ձևականութեաններից, արտամուսնական յերկխաներին չճանաչելուց, նրանց հայրերին վորոնումից: Մենք իրավունք ունենք հազար անգամ հպարտանալու նրանով, ինչվոր արել ենք այդ

ասպարեղում: Բայց վորքան մաքուր մաքրեցինք հողը հին բուրժուական որենքներից և հիմնարկների խլամից, այնքան մեղ համար պարզվեց, վոր այդ միայն կառուցման հողամասի մաքրումն է և վոչ թե կառուցումը»: (Լենին, — Մեծ նախաձեռնութեան, հ. XXIV, յեր. 343):

Մատնանշելով, վոր կինը դեռ ևս շարունակում է մնալ տնային ստրկուհի, չնայած բոլոր ազատարար որենքների, Վ. Ի. Լենինը գրում է, վոր «կանանց իսկական ազատագրումը, իսկական կոմունիզմը սկսվում է միմիայն այնտեղ և այն ժամանակ, յերբ պետական իշխանութեանը տիրող պրոլետարիատի ղեկավարութեամբ կսկսի մասսայական պայքար այդ մանր տնային տնտեսութեան դեմ, կամ ավելի ճիշտ, նրա մասսայական վերակառուցումը մեծ սոցիալիստական տրնտեսութեան»: (Լենին, — Մեծ նախաձեռնութեան, հ. XXIV, յեր. 343):

«Կինը ճնշված է իր տնային տնտեսութեամբ և այդ դրութեանից նրան կարող է ազատել միմիայն սոցիալիզմը, միմիայն այն ժամանակ, յեր մենք մանր տնտեսութեաններից կանցնենք ընդհանուր տնտեսութեան և հողի ընդհանուր մշակման: Միայն այն ժամանակ կլինի կնոջ լրիվ ազատագրումը և ճորտալուծումը»: Այդպես վորակեց ընկ. Լենինը 1918 թ. նոյեմբերին, բանվորուհիների առաջին Համառուսական համագումարում: Այն ժամանակվանից անցել է միայն 15 տարի: Այն ժամանակվա ստրկական ու ստորացնող վիճակից, վորի մեջ դասվում էր կինը — հետքն էլ չէ մնացել... Գաղաքական և տնտեսական լրիվ իրավահավասարութեան ու կնոջ անկախութեանը, — այն,

վորի համար դարերի ընթացքում յերազել են մարդկուծխան ամենալավ ներկայացուցիչները, — արդեն փաստ է դարձել մեզ մոտ:

Կանայք դարձել են թորհրդային յերկրում իրավահավասար քաղաքացիներ: Թորհրդային Միության կանայք—Լենինգրադի բանվորուհիների բերանով այսօր հպարտորեն բալետը են տալիս միջազգային պրոլետարիատի սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին իրենց հաղթանակների մասին:

Ինչպիսի հպարտությամբ են հնչվում այս խոսքերը. «Մենք բանվորուհիներս պատասխանատու յենք Լենինգրադի սոցիալիստական արդյունաբերության պլանի կեսի համար»: Բանվորների ընդհանուր կազմից 42% կանայք — կռվում են Լենինգրադի Ֆաբրիկաների և գործարանների արտածրագրի իրագործման համար: «Սվետլանա» գործարանի ցեխերում աշխատող կանանցից՝ 46 ճարտարապետներ են, 40 տեխնիկ, 39 վարպետ, 5 ցեխերի ղեկավարներ:

Խոնավ նկուղների տեղ, ու յերեխաներին առանց հոգատարության թողնելու փոխարեն, Թորհրդային Միության բանվորուհին հնարավորություն է ստացել ապրելու լույս ու արևոտ բնակարաններում ու հանգստանալ սանաատրիաներում:

Հասարակական ճաշարանները, մուրները, մանկապարտեզները, վորոնց մասին Վ. Ի. Լենինը ասում էր, վոր նրանք «խկապես ընդունակ են ազատագրելու կնոջը, վերացնելու նրա անհավասարությունը տղամարդու հետ, բարձրացնելու նրա դերը հասարակական արտադրության մեջ և հասարակական կյանքում» — այսօր սրանք դարձել են իրականություն ու դարձել

են կնոջ ազատագրման գործում ուժեղ միջոցներ: Հիմնական փոփոխություններ տեղի ունեցավ և գյուղի կանանց կյանքում: Գյուղատնտեսության սոցիալիստական մեծ վերակառուցումը անդրադարձավ մանավանդ գեղջկուհու կյանքի վրա: Ցարիզմի որով չափազանց ճնշված, մոռացված, հետամնաց, անգրագետ, ոտովան ամեն տեսակի նախապաշարուհիներով, յեկեղեցու ու կրոնի հենարաններ, այսօր դարձել են ինքնուրույն մարդիկ այդ խոսքի իսկական իմաստով: Ընկեր Ստալինը դուրս գալով կոլխոզնիկ հարվածայինների առաջին Համամիութենական համագումարում — ընդգծեց կոլտնտեսություններում կանանց աշխատանքի հարցի բացառիկ կարևորությունը: «Կանանց հարցը կոլտնտեսություններում, ընկերներ, — մեծ հարց է... Հարցը այստեղ նրանում չէ, վոր կանայք կազմում են ազգաբնակչության կեսը: Հարցը ամենքից առաջ նրանումն է, վոր կոլտնտեսային շարժումը առաջ քաշեց ղեկավարող պաշտոնների մի շարք դարմանալի և ընդունակ կանանց: Կինը կոլխոզում մեծ ուժ է: Պահել այդ ուժը գրվանի տակ (ПОД СПУДОМ) — նշանակում է վոճրագործություն կատարել: Մեր պարտականությունը կայանում է նրանում, վոր կոլտնտեսություններում առաջ քաշենք կանանց և գործի դնենք այդ ուժը... Ինչ վերաբերում է իրենց — կոլտնտեսուհիներին — նրանք պետք է հիշեն կոլտնտեսությունների ուժի նշանակությունը կանանց համար, պետք է հիշեն, վոր միմիայն կոլտնտեսություններում նրանք հնարավորություն ունեն ֆայելու հավասար քաղաքացիական հետ: Առանց կոլտնտեսությունների — անհավասարություն, կոլտնտեսություններում — իրավունք»

ների հավասարում: Թող այդ հիշեն ընկեր կոլտնտեսուհիները և թող նրանք պաշտպանեն կոլտնտեսային կարգերը, ինչպես իրենց աչքի լույսը» (Ստալին): Կոլտնտեսային կարգի հաղթանակը գյուղում հիմք դարձավ կանանց կատարյալ ազատագրման ու ճորտալուծման: Խորհրդային իշխանության որոք մենք հասել ենք մեծ նվաճումների կանանց աշխատանքի ասպարեզում: Այդ հաջողություններին մենք հասել ենք կապիտալիզմից մնացած ժառանգության և սրա պաշտպան դասակարգի դեմ համառ կռիվ մղելով: Այդ կռիվը դեռ չի վերջացած ու այդ ասպարեզում դեռ անելիք շատ ունինք:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անդրկովկասի ազգային հանրապետությունների պայմաններում կանանց աշխատանքի ներգրավման հարցը շատ սուր կերպով է դրված, վերոմիջոցառումներով, շնորհիվ սոցիալ-պատմական պայմանների, կիրք գտնվել եր ծանր ճնշման տակ, քան թե այդ տեղի յե ունեցել ցարական Ռուսաստանի ուրիշ վայրերում: Ծնորհիվ այդ հանգամանքի, ավելի սլարդ կերպով է նկատվում այն հսկայական նվաճումները, վոր մենք ունենք առաջին հնգամյակի ընթացքում Վրաստանի ժողովրդական տնտեսության մեջ, կանանց աշխատանքի գործադրման ասպարեզում: Վրաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում—բանվորների և ծառայողների թվում կանայք կազմում են 1933 թ. 28,0%: Վրաստանի արդյունաբերության մեջ գրադ-

ված ձեռքերի 32,8%-ը կազմում են կանայք: Իսկ մի-միայն բանվորների հետ համեմատած—35,5%, շինարարության մեջ կանայք կազմում են—10,2%, տրանսպորտի և կապի—12,1%: Իսկ գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ—23,9%: Կանանց աշխատանքի գործադրումը Վրաստանի արդյունաբերության մեջ այն առանձնահատուկ բնույթն է կրում, վոր կինը տղամարդու հետ հավասար տանում է վորակյալ աշխատանք, հակառակ անցյալի, յերբ կանանց աշխատանքը գործադրվում եր միմիայն վոչ վորակյալ աշխատանքներում:

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում կանանց թիվը արդյունաբերության մեջ ավելանում է համարյա չորս անգամ— հասնելով 1932 թ.—15 767 մարդու, հակառակ 4693 մարդու 1928 թվին: 1933 թ. կանանց թիվը հասնում է 17.215 մարդու: Համեմատած գրան — բարձրանում է և տոկոսային հարաբերությունը—այն է՝ 1928 թ.—19,0%, 1932 թ.—29,6%, 1933 թ.—32,8%: Աստիճանաբար սկսվում է գործադրվել կանանց աշխատանքը ժողովրդական տնտեսության և այնպիսի մասերում, ինչպիսին շինարարությունն է, ուր կանանց աշխատանքն առաջին հնգամյակի ընթացքում գործադրվում եր շատ չնչին չափով: Այդ ասպարեզում կանանց թիվը ավելանում է 18 անգամ և հասնում է համարյա 3.430 մարդու 1932 թ.—հակառակ 193 մարդու—1928 թվում: 1933 թ. կանանց թիվը շինարարության մեջ կազմում է 4.789 մարդ: Համեմատաբար մեծանում է և տոկոսային հարաբերությունը. 1,3%-ից մինչև 7,1%-ը—1933 թ. կանանց թիվը շինարարության մեջ կազմում

ե 10,8%⁰ կանանց թիվը մեծանում է նաև տրանսպորտում և կապում. վորտեղ նրանց թիվը 1962-ից—1928 թ. բարձրանում է մինչև 4580 մարդու—1932 թվին, և 5589 մարդու—1933 թվին: Տոկոսային կշիռը մեծանում է—6,3%⁰-ից 1928 թ. մինչև 10,5%⁰-ը 1932 թվին և 12,1%⁰—1933 թվին: Արագ կերպով է ընթանում կանանց աշխատանքի գործադրումը մանավանդ գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ, ուր կանանց թիվը առաջին հնգամյակի ընթացքում մեծանում է 16 անգամ և հասնում է 13 896 մարդու—1932 թ., հակառակ 867 մարդու—1928 թվին: 1933 թ. կանանց թիվը գյուղատնտեսության և անտառատնտեսության մեջ կազմում է 15.282 մարդ: Տոկոսային կշիռն էլ համեմատաբար մեծանում է այստեղ—12,3%⁰-ից 1928 թ.—մինչև 22,2%⁰—1932 թ., և 23,9%⁰—1933 թվին:

ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում կանանց թիվը շատանում է—26.827 մարդուց—1928 թ., մինչև 85.229 մարդ 1932 թ., վորի տոկոսային բարձրացումը կազմում է 18,7%⁰-ից մինչև 24,9%⁰:

Իսկ 1933 թ. տնտեսության բոլոր ճյուղերում կանայք կազմում են 96.580 մարդ, կամ բոլոր զբաղված ձեռքերի ընդհանուր թվի 28,0%⁰-ը: Այսպես ուրեմն—առաջին հնգամյակի ընթացքում մենք ունենք վճռական բեկում կանանց աշխատանքի ներգրավման ու նրա ամրապնդման ասպարեզում, վճռական բեկում կանանց ներգրավման տեմպերի բարձրացման մեջ—սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեղներում: Կանանց արտադրության մեջ ներգրավելու այդ բարձր տեմպերը պայմանավորված են խիստ մեծացող կադ-

րերի կարիքի հետ: Այդպիսով նա դառնում է անհրաժեշտ ու միևնույն ժամանակ սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար անմիջական հենակետ:

Կտրուկ բեկում կանանց աշխատանքի գործադրման մեջ տեղի յե ունենում սկսած 1930 թվից, հակառակ անցած շրջանի, յերբ կանանց աշխատանքի տոկոսային հարաբերությունը փոփոխվում է շատ չնչին չափով: Այսպես որինակ Փաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ կանանց թիվը 1926 թ. 1/1-ից մինչև 1929 թ. 1/1-ը բարձրանում է 14,8%⁰-ից մինչև 19,9%⁰-ը:

Իսկ 1929 թվի 1/1-ից մինչև 1932 թվի 1/1-ի ժամանակամիջոցում, այսինքն էլի 3 տարվա ընթացքում, կանանց թիվը արդյունաբերության մեջ բարձրանում է 19,9%⁰-ից մինչև 29,1%⁰-ը, իսկ 1933 թվին մինչև 32,8%⁰:

Արդյունաբերական առանձին տնտեսական խմբակներում մենք ունենք հետևյալ պատկերը. կանանց թիվը «Ա» խմբում (արտադրական միջոցների արտադրություն) բարձրանում է 13,9%⁰-ից—1930 թ. 1/1-ը—մինչև 18,9%⁰-ը 1933 թ. 1/1-ը: «Բ» խմբում (սպառողական միջոցների արտադրություն) կանանց թիվը նույն տարիներում բարձրանում է 30,5%⁰-ից մինչև 44,5%⁰-ը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կանանց թվի աճումը վրաստանի Փաբրիկա-գործարանային արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Կանանց թվի տոկոսային հարաբերությունը Փաբրիկա-գործարանային բանվորների ընդհանուր թվի համեմատ (%-ով):

	Արդյունաբերության ճյուղեր	առ 1/1 1928թ.	առ 1/VI 1933 թ.
	Ամբողջ արդյունաբերության մեջ	10,6	35,0
	Գլխավոր ճյուղերում		
1	Քարածուխի	0,8	10,1
2	Նավթի	—	3,4
3	Նավթի վերամշակման	—	10,3
4	Մետաղի	0,8	7,2
5	Մանգանի	—	1,9
6	Փայտի մշակման	4,9	22,5
7	Բամբակամշակման	25,1	60,8
8	Բրդի	39,3	80,9
9	Մետաքսի	94,0	82,5
10	Գուլիգրաֆ. (սպաղարական)	6,9	37,4

Վերև բերված տվյալները ցույց են տալիս կանանց թվի տոկոսային հարաբերության մեծացումը բանվորների ընդհանուր թվի հետ համեմատած, արդյունաբերության բոլոր ճյուղերում: Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք կանանց աշխատանքի գործադրումը արդյունաբերության և այնպիսի ճյուղերում, վորտեղ կանանց աշխատանքը կամ բոլորովին չեն գործադրվում, կամ գործադրվում են շատ չինչին չափով:

Այսպես որինակ քարածուխի արտաբերման մեջ կանանց թիվը աճում է 0,8%-ից մինչև 10,1%-ը, մետաղի արդյունաբերության մեջ աճում է 0,8%-ից մինչև 7,2%-ը, մանգանի արտաբերման մեջ 1928 թ. վոչ մի կին աշխատող չկա, իսկ 1933 թ. կանանց թիվը կազմում է ընդհանուր բանվորների թվի 1,9%-ը: Դրան կից մենք ունենք արդյունաբերության այնպիսի նոր ճյուղեր, վորտեղ ներառված է կանանց ձեռքերի բավականին մեծ տոկոս: Այսպես որինակ, Վրաստանի նավթի արտաբերման մեջ կանանց թիվը կազմում է բանվորների ընդհանուր թվի 3,4%-ը, իսկ նավթի մշակման մեջ—19,3%-ը: Փայտի մշակման մեջ մենք ունենք կանանց թվի աճումը 4,9%-ից մինչև 22,5%-ը, բամբակեղենի արդյունաբերության մեջ 25,1%-ից մինչև 60,8%-ը, բրդի — 39,3% — 80,9%, տպագրական—6,9%—37,4%:

ԿԱԴՐՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ԿԱՆԱՆՑԻՑ

Բացի արդյունաբերության մեջ մեծ չափով կանանց ներգրավելուց, տարված է նաև հսկայական աշխատանք նրանցից նոր, վորակյալ կադրեր պատրաստելու համար: Այս ասպարեզումն են ունենք մեծ նվաճումներ:

Առաջին հնգամյակում ընդհանուր կրթության դրուքոցներում կին սովորողների թիվը աճել է հսկայական չափերով:

1927/28 ուս. տ. ընդհանուր կրթության դպրոցներում սովորողների թիվը կազմում է 285.606 մարդ, վորոնցից կանայք 115.842, կամ ընդհանուր թվի

40,6% -ը. 1932/33 ուս. տ. սովորողների թիվը աճում է մինչև 302.927 մարդ, նրանցից կանայք 209.523, կամ 41,7%:

Այսպիսով մենք ունենք կանանց թվի մեծացումը ընդհանուր կրթության դպրոցներում առաջին հնգամյակի ընթացքում համարյա 2 անգամ:

Այդպես է պատկերը նաև կադրեր պատրաստող հիմնարկություններում, այն է—1927/28 ուս. տ. սովորողների ընդհանուր թիվը—20.958 մարդ, վորոնցից կանանց թիվը—6060, կամ 28,9%, 1932 ուս. տ. սովորողների ընդհանուր թիվը—72289 մարդ, վորոնցից կանայք—25.578, կամ 35,4%:

Ուրեմն կանանց թիվը կադրերի դպրոցներում առաջին հնգամյակի ընթացքում աճում է ավելի քան չորս անգամ: Բարձրագույն դպրոցներում սովորող կանանց թիվը բարձրանում է 2380 մարդուց 1927/28 ուս. տ. մինչև 5679 մարդ 1932/33 ուս. տ., վորը ապրիս է համեմատաբար տոկոսային հարաբերություն բարձրացումը—22,6% մինչև 32,0%-ը: Տեխնիկումներում սովորող կանանց թիվը աճում է 3216 մարդուց 1927/28 ուս. տ.—մինչև 14539 մարդ—1932/33 ուս. տ.—այսինքն ավելանում է չորս և կես անգամ: Տեխնիկումներում սովորողների ընդհանուր թվից 1932/33 ուս. տ.—կանայք կազմում են—43,3%: 1927/28 ուս. տ. բանֆակներում սովորողների ընդհանուր թիվը—1874 մարդ, վորոնցից կանայք—307 մարդ, կամ 16,4%: 1932/33 ուս. տ. նույն բանֆակներում սովորողների ընդհանուր թիվը 8583 մարդ, վորոնցից կանայք—2205 մարդ, կամ 25,7%:

Մեծ աճում է տալիս կին սովորողների թիվը առաջին հնգամյակի ընթացքում նաև ՖՁՈՒ-ներում, վորտեղ կին սովորողների թիվը 1927/28 ուս. տ. 157 մ., իսկ 1931/33 ուս. տ. 3155 մարդ, կամ համապատասխան թվականներում բարձրանում է 16,3% մինչև 25,4%-ը:

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԱՆՅԻՑ

Առաջին հնգամյակի ընթացքում մենք ունենք մեծ նվաճումներ ազգային փոքրամասնությունների կանանցից կադրեր պատրաստելու ասպարեզում, վորը Անդրկովկասի ազգային հանրապետությունների պայմաններում, մասնավորապես Վրաստանում, ունի իր հատուկ նշանակությունը:

Մեր նվաճումները այդ ասպարեզում պարզ պացույց են նրան, թե ինչպես Վրաստանի աշխատավորուհին դառնում է իրավահավասար անդամ սոցիալիստական ընդհանուր ընտանիքում և տղամարդու հետ վոտք-վոտքի պայքարում է յուրացնելու արտադրության տեխնիկային, հաղթանակելու կուլտուրական ճակատում ու կառուցելու անդասակարգ սոցիալիստական հասարակություն:

1927/28 ուս. տ. Վրաստանի բոլոր տեսակի կադրերի դպրոցներում սովորում էին 15081 վրացի, վորոնցից վրացուհիներ—2483 մարդ, կամ 16,5%, իսկ 1932/33 ուս. տ. վրացուհիները ընդհանուր սովորող վրացիների թվում կազմում են 14583 մարդ, կամ այսպիսով, առաջին հնգամյակի ժամանակամիջոցում

1006
2907



վրացուհի կադրերի թիվը ավելանում է վեց անգամ:

Վրաստանում, կադրերի զպրոցներում սովորող հայերի թվից, ելի նույն ժամանակաշրջանում, կանանց թիվը բարձրանում է 19,2% -ից մինչև 34,8%:

Մեծ են մեր նվաճումները ավգային փոքրամասնութունների կանանցից կադրաներ պատրաստելու գործում:

Որինակ՝ 1927/28 ուս. տ. սովորող աճարցիների ընդհանուր թվում—կանայք կազմում էին 19 մարդ, 1932/33 ուս. տ. այդ թիվը բարձրանում է 8,8%-ից—մինչև 19,5%-ը:

Մեծ չափով աճում է թրքուհիների թիվը կադրերի դրոցներում: Յեթե 1927/28 ուս. տ. սովորող թրքուհիների թիվը կազմում էր 32 մարդ, արդեն 1932/33 ուս. տ. այդ թիվը համարյա 5 անգամ ավելանում է—կազմելով 147 մարդ, կամ ընդհանուր սովորողների թվի 15,1%-ը: Ավելանում է նաև մեծ չափով և արխաղուհիների թիվը կադրերի զպրոցներում: 1927/28 ուս. տ. սովորում է միմիայն 7 արխաղուհի, իսկ 1932/33 ուս. տ. արդեն նրանց թիվը հասնում է 132-ի,—այսինքն նրանց թիվը շատանում է համարյա 20 անգամ:

Ոսուհիների թիվը 1927/28 ուս. տ. կազմում է 60 մարդ, իսկ 1932/33 ուս. տ. արդեն 285 մարդ, այսինքն—սովորող ոսերի ընդհանուր թվի 34,9%:

Յեթե 1927/28 ուս. տ. կադրերի զպրոցներում սովորում էր միմիայն մի հույն կին, 1932/33 թ. նրանց թիվը բարձրանում է մինչև 152 մարդ, կամ հույն սովորողների ընդհանուր թվում կանանց տոկոսը հա-

մապատխան տարիներում բարձրանում է 2,1%—33,4% ը:

Բարձրագույն զպրոցներում 1931/33 ուս. տար. վրացի սովորողների ընդհանուր թվից կանայք կազմում են 2881 մարդ, կամ 33,0%, նույն զպրոցներում հայուհիների թիվը—205, թրքուհիների—31, ոսուհիների—13, արխաղուհիները—11, աճարուհիներ—3 և հույն կանայք—7:

Տեխնիկումներում վրացուհիների թիվը բարձրանում է 2182 մարդուց—1927/28 ուս. տ. մինչև 8586 մարդ—1932/33 ուս. տ.—կամ—38,7% -ից մինչև 42%: հայ կանանց թիվը նույն տարիներում բարձրանում է 379 մարդ. մինչև 1189 մարդ, թրքուհիների թիվը նույն տարիներում բարձրանում է 31—մինչև 93 մ., աճարուհիների թիվը 19-ից—111 մարդ, արխաղուհիների թիվը—7-ից—113 մ., ոսուհիները—34—176, հույն կանանց թիվը—134, ասորի կանայք—2:

Վրաստանի բանֆակներում վրացուհիների թիվը աճում 161 մարդուց—1927/28 ուս. տ. մինչև 935 մ., 1932/33 ուս. տ., կամ 14,0%-ից—մինչև 23,7% ը: Հայուհիներ բանֆակներում սովորում են—94 մարդ, թրքուհիներ—22, աջարուհիներ 5, արխաղուհիներ—7, ոսուհիներ 58 և հույն կանայք 5: Ֆար-գործարանային զպրոցներում վրացուհիների թիվը բարձրանում է նույն թվականներում—140 մարդուց, մինչև 2181 մարդ, կամ 23,0%—26,1%, հայուհիների թիվը—151, թրքուհիների թիվը—1, աջարուհիներ—1, արխաղուհիներ—1, ոսուհիներ—9, հույն կանայք 6, ասորի կանայք—1:

Ահա այն հիմնական նվաճումները, վոր մենք ունենք կանանց աշխատանքի գործադրման ասպարե-

գում, ու, միևնույն ժամանակ, նրանցից, մանավանդ ազգային փոքրամասնությունների կանանցից կաղերք պատրաստելու գործում:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անհրաժեշտ է ընդգծել Վրաստանի կոլտնտեսուհիների մեծամասնության ակտիվության ուժեղ բարձրացումը թե կոլտնտեսության շինարարության և թե քաղաքական, հասարակական ու տնտեսական սապարեզներում: Կոլտնտեսուհիները ներգրավված են բրիգադային արտադրական խորհրդակցությունների մեջ, կին-պատգամավորական ժողովներում, կուլտ-կենցաղային հանձնաժողովներում, համագումարներում և այլն:

Կին-կոլտնտեսուհին դառնում է արտադրության ղեկավար: Վրաստանի շատ շրջաններում կոլտնտեսուհի-հարվածայինը գլխավորում է կոլտնտեսության աշխատանքի կարեվոր ճյուղերի բրիգադներին: Նախական տվյալներով կին բրիգադիները կազմում են մոտավորապես 15%: Թեյի և ծխախոտի հավաքման ժամանակ կազմակերպված եյին հատուկ կանանց բրիգադներ:

1932 թ. տեխնիկական կուլտուրաների շրջաններում, կին կոլտնտեսուհիները կազմում էին կանանց ընդհանուր աշխատավոր ձեռքերի 80—85% ը:

Ստալինիսի շրջանի 4385 աշխատընդունակ կանանցից դուրս են գալիս աշխատանքի 3845 մարդ, կամ 87,6%:

Կան կոլտնտեսություններ, ուր կանանց աշխատանքը ոգտադործվում է 100%-ով (Յրոմի, Գվենատկոցա, Բուխի): 1933 թվին, համեմատած 1932 թ. հետ մեծ չափով բարձրացել է կանանց աշխորերի միջին թիվը:

Դուշեթի շրջանում Բազալեթի կոլտնտեսության մեջ 1 կին-կոլտնտեսուհուն ընկնում է 75 աշխոր, Բորչալուի շրջանում, (Սարաչլոյի կոլտ.)—54 աշխոր, Տարորեդի գյուղի կոլտնտեսության մեջ կնոջ աշխատածը կազմում է 150 աշխոր:

Կոլտնտեսուհի - հարվածայինները տալիս են աշխատանքի ամենալավ ցուցանիշները—տալով 200—245—270 և ավելի աշխորեր: Կանայք կատարում են գյուղատնտեսական ամենաբարդ աշխատանքներ, աշխատեցնում գյուղատնտեսական ամենաբարդ մեքենաներ:

Մեծ չափով բարձրացել է կին-կոլտնտեսուհու մասնակցությունը կոլտնտեսության դանադան ղեկավար մարմիններում: Որինակ Վրաստանի 16 շրջաններում, վորտեղ կան 745 կոլտնտեսություններ, նրանց վարչությունների 2643 ընտրված անդամներից 407 կազմում են կանայք, կամ 13,3%-ը:

Գագրայի շրջանում (Աբխազիա) վարչության անդամ ընտրված են 19 կին, վերահսկիչ հանձնաժողովում—12 կին և վարչության նախագահի տեղակալ 1:

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Մեծ չափով բարձրացել է կանանց ակտիվությունը և դերը հասարակական-քաղաքական կյանքում: Կինը

զրավում ե մի շարք ընտրովի պաշտոններ: Որինակ—
Վրաստանի Կենտ. Գործ. Կոմ. անդամների թվից 17
կանայք են, իսկ 20 թեկնածուներ: Թիֆլիսի և քաղ-
շրջանների խորհրդների 3226 անդամներից կանայք
կազմում են 585, կամ ընդհանուր թվի 18,1⁰/₀: Թիֆ-
լիսի խորհրդում 268 կին անդամներ կան, վոր կազ-
մում ե ընդհանուր թվի 16,2⁰/₀, Լենշրջանի խորհրդում
49 պատգամավորուհի,—կամ ընդհանուր թվի 15,4⁰/₀,
Ստալինի քաղ. շրջանի խորհրդում—94, կամ 25,1 %,
«26» քաղ շրջանի խորհրդում 85, կամ 21,2⁰/₀, Որ-
շոնիկիձեյի քաղշրջանի խորհրդում—89, կամ 18,5⁰/₀:

Թե Թիֆլիսի և թե Թիֆլիսի քաղշրջանների խոր-
հուրդներում պատգամավորուհիները ակտիվ սասնակ-
ցություն են ցույց տալիս սեկցիաների աշխատանքնե-
րին: Որինակ Թիֆլխորհրդի 268 պատգամավորահիներ-
ից 179 մասնակցում են զանազան սեկցիաներին,
Ստալինի քաղշրջանի խորհրդում—75 պատգամա-
վորահի, «26» քաղշրջանի խորհրդում—72 պատգամա-
վորուհի, Որշոնիկիձեյի քաղշրջանի խորհրդում 59
պատգամավորահի:

Վրաստանի բոլոր խորհրդների անդամներից 4942—
կանայք են, վորը կազմում ե ընդհանուր թվի 16,8⁰/₀-ը:

ԿԵՆՅԱՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Կանաց հարցի պրոբլեմը, իհարկե, չի սպառվում
կանանց ներգրավումով արդյունաբերության մեջ, կամ
թե կանանցից վորակյալ կադրեր պատրաստելով:

Անհրաժեշտ ե դեռ շատ մեծ աշխատանք կատարել
կենցաղի սոցիալիստական վերակառուցման համար ու

առաջին հերթին կնոջ ազատել յերեխաների հոգատա-
րությունից, խնամքից և խոհանոցի աշխատանքից:
այսինքն լայն կերպով ծավալել հասարակական ճա-
շարաններ, մսուրներ, մանկապարտեզներ և այլն:

Այդ ասպարեզում մենք ունենք նույնպես մեծ նվա-
ճումներ: Այսպես որինակ. 1932 թ. մայրության և
մանկան պաշտպանության համար Վրաստանում ծախ-
սվել ե 2.486 հազ. ուրբի վորից մայրության ոգնելու
համար 683 հազ. ու., նորածին յերեխաների խնամա-
տարության համար—286 հազ. ու.; ծծկեր յերեխաներին
կերակրելու ոգնության համար—468 հազ. ու. կաթախո-
հանոցների համար—22 հազ. ու. մանկամսուրների հա-
մար—584 հազ. ու. մանկապարտեզների և մանկահրա-
պարակների համար—276 հազար ու. և դպրոցական յե-
րեխաներին ոգնելու համար 166 հազար. ու.

1933 թվի 9 ամսվա ընթացքում ծախսվել ե ման-
կամսուրների, մանկապարտեզների և դպրոց հաճախող
յերեխաներին կերակրելու համար—1333 հազ. ու., հա-
կառակ 491,6 հազար ուրբ. 1931 թ.: Մանկամսուրների
համար ծախսվել ե 1933 թ. 726,0 հոզ. ու. իսկ 1931 թ.—
247 հազ. ու. մանկապարտեզների վրա ծախսվել ե
1933 թ.—367,4 հազ. ու., իսկ 1931 թ.—242,1 հազ. ու.
և դպրոցական յերեխաներին կերակրելու համար 1933 թ.
ծախսվել ե 240,2 հազ. ու. իսկ 1931 թ. 102,4 հազ. ու.

1928 թ. մինչ դպրոցական ստացիոնար հիմնարկու-
թյուններում ընդգրկված ե յեղել 4-6 տար. հասակ ունե-
ցող 7200 յերեխա, կամ այդ հասակի բոլոր յերեխա-
ների թվի 2,5⁰/₀: 1932 թ. վերջին 4—6 տարեկան հա-
սակի ընդգրկված յերեխաների թիվը կազմում ե 31.100,
կամ այդ հասակի յերեխաների ըհանուր թվի 97⁰/₀-ը:

Միաժամանակ հսկայորեն ծավալվում է կայուն և սեղոնային—ժամանակավոր մանկամուկների ցանցը, մանավանդ կոլտնտեսություններում հացահավաքի ժամանակ:

ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐՆԵՐԻ ՅԱՆՅԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Տարի	Քաղաք		Գյուղ	
	Մուկների քանակը	Յերեխաների թիվը	Մուկների քանակը	Յերեխաների քանակը
1928	6	125	2	50
1929	10	175	5	125
1930	13	260	26	635
1931	25	620	274	6094
1932	54	1895	479	11638
1933	74	3440	493	12018

Ուրեմն, յեթե 1928 թ. վրաստանի քաղաքներն ունեցել են ընդամենը 6 մանկամուկ 125 յերեխաներով, ապա 1933 թ. նրանց թիվը հասնում է 74-ի—3440 յերեխաներով, այսինքն—յերեխաների թիվը ավելանում է մոտ 26 անգամ: Մուկների թիվը,— թե մշտական և թե ժամանակավոր արագորեն աճում է մանավանդ գյուղում: Այսպես որինակ՝ 1928 թ. գյուղում ունենք 2

մուկ—50 յերեխաներով, իսկ 1933 թվին 493 մուկ—12018 յերեխաներով: Մանկամուկների յերեխաների թիվը գյուղում 1928 թվից մինչև 1933 թ. մեծանում է 240 անգամ:

Այսպիսի յեն մեր հիմնական նվաճումները կանանց աշխատանքի ասպարեզում առաջին հնգամյակի ժամանակամիջոցում:

Ինչպես տեսնում ենք, համեմատաբար պատմական շատ կարճ ժամանակամիջոցում արմատական բեկումն է տեղի ունենում կյանքի այնպիսի ասպարեզում, վորտեղ առավելապես խորն են յեղել կապիտալիստական հասարակակարգից մնացած ժառանգությունը, վորտեղ չափազանց ուժեղ են յեղել զանազան նախապաշարումներն ու տրագիցիաները:

Վրաստանի կինը թեև կոխել է յերկրորդ հնգամյակը մեծ նվաճումներով, բայց այդ նվաճումները դեռ ևս վերջնականապես չեն լուծում կանանց կենցաղային ու աշխատանքի հարցերը:

Հարկավոր է դեռ ևս մեծ աշխատանք, իրականացնելու համար այն մեծ խնդիրները, վոր դրված են մեր առաջ յերկրորդ հնգամյակում:

Յերկրորդ հնգամյակում կանանց աշխատանքի գործադրման հնարավորությունները ել ավելի մեծանում են: Յերկրորդ հնգամյակի ընթացքում աշխատանքի ավելի մեծ չափով մեքենայացումը, առողջացնող ու բացիտնալիզատորական միջոցների կիրառումը—ել ավելի հնարավորություն կտան ու կհեշտացնեն կանանց աշխատանքի գործադրումը արտադրության մեջ:

Միևնույն ժամանակ, մանկամտուրների, մանկապարտեզների, ոչխանների, հասարակական սննդի հիմնարկների լայն չափով ծավալումը անհրաժեշտ պայմաններ են ստեղծելու թե կանանց մասսաներին ներգրավելու սոցիալիստական արտադրության մեջ և թե վերջնականապես սոցիալիստականորեն կվերակառուցեն կանանց աշխատանքի և կենցաղի պայմանները:



« Ազգային գրադարան



NL0235868

25 4-

56.169

А. ШОРР

Женский труд в народном
хозяйстве Грузии.

ПАРТИЗДАТ ГРУЗИИ. 1934.